ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10-Ա

«23» փետրվարի 2018 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.093 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ / ՀՈՎՏՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ , 4-ՐԴ ՀՈՂԱՄԱՍ/ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ /ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ/ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 1-ի թիվ 8-Ա որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն բնակավայրի 1-ին փողոց, հողամաս 4 հասցեում գտնվող 0.093 հեկտար հողամասը /ծածկագիր 08-070-0007-0020/ նվիրաբերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն/ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/՝ հետագայում եկեղեցիներ և եկեղեցապատկան շինություններ կառուցելու նպատակով:
2. Կնքել նվիրաբերության պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«23» փետրվար 2018 թվական
գյուղ Ամասիա